

## ՅՈՒՅԱԿ

### ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ԱՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ\*

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 1ա—125ա.—Ընդհանուր տեքստը գրված է յոթ պոմակի վրա, որոնք նետկալմերն են.—

1. արական.
2. իգական.
3. օր ծննդյան.
4. օր մկրտության.
5. աճվանք ծննդոց.
6. աճվանք և ազգանվանք ծննդաց և դավանորչանց նոցին.
7. կնքանարք:

Նշված են Խգդիրմակա գյուղում 1884—1918 թթ.  
35 տարվա ընթացքում ծնված և մկրտված երեխաների ցուցակը, վերոնիշյալ տվյալներով: Ամեն տարվա վերջում ստորագրել է գյուղի քահանան: 1884—1897 թթ. ստորագրել է ծխառեր Վարդան քահանա Արգումանյանը, ապա, երկի ծերության պատճառով, գյուղում եղել է նաև մի երկրորդ քահանա՝ Մեսորդ Չափարշյանց անունով, որով նետազմ տարիներին՝ 1894—1904 թթ. ստորագրել են երկրությունը, իսկ նետազմում՝ 1905—1918 թթ. ստորագրել է միայն Մեսորդ քահանան, շատ հավանաբար 1905 թ. վախճանվել է Վարդան քահանան:

Թթ. 125բ.—158ա.—Ընդհանուր տեքստը գրված է մեց պոմակի վրա, որոնք նետկալմերն են.—

1. թիվ պատկաց.
2. ամսի ամսաթիվ.
3. անուն ազգանուն փեսային.
4. տարիք փեսային.
5. անուն ազգանուն նարսին.
6. տարիք նարսին:

Նշված են նոյն գյուղում 1882—1917 թթ. 36 տարվա (սկզբում մի քանի տարի պակասում է՝ պա-

\* Շարունակած «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Հ—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №Ն Հ—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №Ն Գ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №Ն Ա—Բ-ից, Ժ-ից և 1973 թվականի № Ա-ից:

պես 1883—6 և 1888—9 թթ.) շրջանում կատարված պակերների ցուցակը, վերոնիշյալ տվյալներով: Այսուղի ևս երկու քահանաների ստորագրությունները հաշորդում են իրար նոյն ներթականությամբ ինչպես վերևում:

Թթ. 159բ—203բ.—Ընդհանուր տեքստը գրված է յոթ պոմակի վրա, որոնք նետկալմերն են.—

1. արական.
2. իգական.
3. օր մահու.
4. օր թաղման.
5. անուն ազգանուն մահացեալի.
6. տարիք արականի.
7. տարիք իգականի:

Նշված են նոյն գյուղում 1882—1905 թթ. 24 տարվա (ձեռագիր մասունքի վերջին էջերը թափած թվեկուն 1906—1917/8 թթ. ցուցակը պահպան է, ինչպես նաև կազմի կոմակի մասը) շրջանում մահացածների ցուցակը, վերոնիշյալ տվյալներով: Երկու քահանաների ստորագրությունները հանդիս են զայիս վերոնիշյալ ներթականությամբ:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

##### (Կազմի վրա Ա. Երեսին)

##### Մատուն

Ծնելոց, պապելոց և ննջեցելոց

Ծխառեր Ս. Գևորգ և կենդեցույն

Խգդիրմասայ գիտի մէջ:

##### (Կազմի Բ. Երեսին)

1910 թիւ

Խգդիրմասայ գիտի

ա) Զափահանսա արականների թիւ

» իգականների թիւ

բ) Անշափահանսա արականների թիւ

» իգականների թիւ

գ) բուրք արականների թիւ

» իգականների թիւ

դ) բնակչաց ընդհանուր թիւ

701:

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

##### (Կազմի վրա գրված է)

19-10-65 № 218:

№ 305

ԿՈՆԴԱԿ

**Թերթեր՝ 1:—Մեծությունը՝ 80,3×31 սմ.:—Նյուրը՝** մի թի դեմանձ հաստ բույր:—Կազմ՝ չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար, ամբողջ երկայնքով մեջտեղից ծալքի տեղից պատռված է, նաև այլ տեղերից:—**Գրությունը՝** միասյուն:—**Տողեր՝ 107:—Գծումներ՝** չունի:—**Քիքը՝** նոտրգիր:—**Զարդարություն՝** Կոնդակի վերևում կա ձևակիր «Ե» տառ, իսկ տեքստի մկրում կա բոշնակիր երկու տառ «ՅԻ», որոնք շատ գեղեցիկ են: Տեքստի առաջին տողի 5-րդ բառի («Կաթողիկոս») վրա նկարված է հասարակ խաչով մի գմբեր: Բացի այլ կոնդակի վերևում կա Փիլիպպոսի կաթողիկոսական գեղեցիկ կարմիր կնիքը, 4 սմ. տրամագծով: Մեջտեղում Քրիստոս է պատկերված, որի երկու կողմը գրված է «ՅՍ.ՔՍ», իսկ կնիքի շորոշ բոլորը նկարված են 12 առաքալերի գույներով: Երկու շրջանակներ կան, որոնք գրություն ունեն: Արտաքինում գրված է, «ՏՐ. ՓԻԼ.ՊՍ. ԿԹՂԿՍ. ԱՄ. ՀՅՈՒ. և ՊԱՏՐ. ՎՂՐԾԴ. ՅՄ. ԹՈՒԽ. ՈՈՐ» (?): Ինչ ներքին շրջանակում գրված է, «ՅԻ. ՔԷ. ԾԻ. ՓԻԼ.ՊՍ. ՎՐԴ.Դ. ՎԱՆԻ. ԴՂՄ.»:—**Քիքը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Փիլիպպոս Աղքակիցի կաթողիկոս (1633—1655 թ.):—**Մալիողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1641 թ.:—**Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:—**Մանուրություն՝** ձեռագիր կոնդակն ստացված է որպես նվեր վերջին տարիներ ներքին թեմերից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փիլիպպոս կաթողիկոսը սույն կոնդակն ուղարկել է Պարսկաստան ձեռամբ Տեր Ղազար Պարունակերին, հանգանակության նպատակով: Կոնդակը շատ երկար լինելուն, տալիս ենք միայն մկրտի և վերջին մասերը:

Ֆի. Քի. Ծառայ Փիլիպպոս Կթղկու. Հայոց նամորինաց լուսավարմից և Քս. ընկալից: Նաև Պատրիարք Վաղարշապատու Երկնասարս կամարակու, արքիաքառակ լուսանկար, պէտքանակներ Քս. ազարդ, Հրեշտակախնձոյ և Յն. ակերտ, հաստակելու և շրեղայօքն սրբոյ աթոռու Էջմիածնի: (Սահման այս չորս տողը գրված է բոլորգրով, որից մետք շարունակվում է ներքրով):

Յորմէ ժամանեալ հասց գիր օրինութեան և նամակ պահպանութեան. շնորհ առաքեալիս և կրնամք տեսանական, օրինութիւնը Աստուածայինը, և զեղմունք գերագոյն էին, առ Քրիստոսափառու և Եշմարտազանդ, հրաշադիտական և վերանկատու վեհափոխութ և ճաճանշահայրադ, առ սեռոտ Հայկացեան, բնակելոց ի կողմանոյ յարեւելից ի մասին Պարսկաստանաց: Ի բաղարս և ի գելու, ի յաւան և բագարականաց: Կոնդակը շատ լավ: Վայրագրությունը կաթողիկոս բարձրագույն է գումարվու խաչապարագութեան: Աստուածայինը և Քրիստոսը կոնդակն ունի երկու սիրուն գունավոր մեծ բոշնագրեր: Կոնդակի վերևի կնիքը, 4,4 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Քրիստոս և կողքը գրված է «ՅՍ. ՔՍ.»: Ծրջանակում

Գրադիտակ և ճարտարամիտ վաճառականաց, բաղարագրի և գեղեցկայօրինու արուեստադրաց: Քրիստոսի և յակտաշխատ ուսմացը: Քրիստոսաւութ և անտագուար աղբատացը: Պարկեշտատու և տնայօրինու կանացը: Եւ այլոց ամենեցուն առասարակ: Միջամեծաց և Փորունց: Ամէն:

Շնորհ ընդ ձեզ և խաղաղութիւն, ողորմութիւն և բարեգործիւն. կեանք և առողջութիւն. և ամենայն բարեաց յաջողութիւն. թէ նոգեորաց և թէ մարմնաւորաց. Աստուած Հօր ամենակալէ և ի բոլորից պատճառտն է և ի միաձեռ որուոյն Յիսուս Քրիստոս և յազարարար վերանորոգողէ. և ի սրբոյ նոգույն կննարքէ, յաէրծածաւլ և մշտարույն յաղթեցն: Ամէն:

Բայց անս առաքեցի առ ձեզ զմամաշուն և հարացաւ որդիի իմ զՏէր Ղազար Պարունակեր, մեծաւ հրամանաւ ի մերս կողմանէ, առ ի բաշխմ ձեզ զնորմին նույնի սրբոյ ի ձեռն սրբալոյն մեռնին, և զնաւ և զնուես ձեր զոր պարտիք նուիրակել և առ մեզ հաստացանել: Արդ և դուք յօմարութեամբ և խնդմութեամբ տուր բանից զուրու զուրաքս առաս միրէ Աստուած ըստ Պողոսի. թէ պստի, թէ բառամից, թէ սրբադրամ. թէ նոգեամին, և թէ զինչկից իրաւունք և հասր զոր պարտիք սրբոյ աթոռու, լուսութեամբ սրի տայր ի Տէր Ղազար Պարունակեր որ մեզ հաստացան, բանից ի դա հասկան մեզ է հասեալ, իսկ մեր Քրիստոս Աստուածը, որ է փոխարինահատույց և վարձատիք մեզ և ձեզ ամենեցուն աշխատաւորաց և վաստակաւորաց. ըստ ամենառատ ողորմութեամ և ըստ անսուն խոստան իրոյ. միոյն հարիւրապատիկ հազարապատիկ և բիրապատիկ, աստ և ի հանդերձելումն իննամենաւը և հանգուցելովք. ի փառ ամենազօր անուան իրոյ և ի գումար անարգամեծարութեան. որ է օրինեալ ընդ նոր իրում և ընդ սրբոյ նոգույն, այժմ և անզոր մշտնշնաւորութեամբ: Ամէն: Գրեցա թուին ՕՄ. (1641 թ.—Ն. Մ.), նոկտեմբերի իւլ: Եւ նաւաարդի նոր:

(Կոնդակ ստորագրություն շոնի):

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա Վ. Հ.-ից 13-10-65: № 215:

№ 306

ԿՈՆԴԱԿ

**Թերթեր՝ 1:—Մեծությունը՝** 45,3×31,5 սմ.:—**Նյուրը՝** դիենած հաստ և դիմացկու բույր:—**Կազմը՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** շատ լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Տողեր՝** 37:—**Գծումներ՝** չունի:—**Քիքը՝** նոտրգիր:—**Զարդարություն՝** կոնդակն ունի երկու սիրուն գունավոր մեծ բոշնագրեր: Կոնդակի վերևում բառի վրա նկարված է գումարվու խաչապար մի գմբեր և երկու բոշուններ: Կոնդակի վերևի կնիքը, 4,4 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Քրիստոս և կողքը գրված է «ՅՍ. ՔՍ.»: Ծրջանակում

գրված է նետկյալը. «ՏՐ. ԵՓՐԵՄ. ԿԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ ՌՄՇԹ (1810 թ.-Ն. Մ.) ԾԱՌՉԻՆ ՏՆ.»: Կմիջը, որպես արեգակ, լուսի գունավոր ճառագայթներ է արձակում, ուկեզովն և այլ գույներով: Կոնդակի ամենավերը տառելքունի մեջ ըլկարգած մի փոքր աչք կա, որ նույնական ճառագայթներ է արձակում:—Գրիշը՝ անհայտ:—Պատմիրատում՝ նիդրն Զորագեղջի կաթողիկոս (1810—1931 թ.):—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 28 մարտի 1931 թ.:—Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք:—Մանուքորյում՝ Մայր Աթոռին Զեռագրատունը 18 հոկտեմբերի 1965 թ. նվեր է առաջի Աստորիանացից Գրիգոր Գերասիմի Սվեծնիկանից, ձեռամբ Վարդան Սարգսի Սիրվանյանի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յիսուսի Քրիստոսի ճառայ Տեր Եփրեմ և Հնորհին Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք առաքելական եկեղեցոյ Քրիստոսի, նաև Սրբ Աթոռոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Հայրապետական բազմանդր օրինութիւն և տիրական կենսածիր սուրբ զողոյշն առաքելական շերտենանդից և հարազան որուց պըրոյ Մայր Աթոռոյ պատուելի անձանց յատկացելոց և հանդիսացելոց նույիրատութեամբ եկեղեցական զարդոց յանուն Սրբ Աթոռոյ՝ որ ի կայսերախանակ յԱստորիան, և աղօթս առնեմք զի շնորհք, ողորմութիւն, գործին և պատմանութիւն ամենաարձրելոյն Աստում հանդերձ գերազօք շնորհօք սուրբ Սամարի Աստում և ի մերն զանձեալ աստուածանակ սրբութեանց նոյնին ի վերայ բոգուց և մարմնոց ձերոց, և ի վերայ զաւակաց և ընտանեաց ձերոց և զօրացուցն զնեալ ի գործս բարիս և ի բարեվայելու յաշողութեանց անդորր ի չարէ և անվտանկ ի դիպուածոց աշխարհի:

Զկեն ողունի և օրինութեան յայտ առնեմք շերմանան բարեկիրդութեամբ ձերում զբան սուրբ գոյշն, երկիր որ քերէ զատուող, օրինեսից զի մատուցանէ ըստ թասուոր յատկութեամբ իսրում զբերս բարիս ի վայելս բանաւոր վատակողի իսրում մարդկան ըստ արքաշադիր հրամանին. վասն որոյ օրինի ամսի իրը ի Տեառնէ, զի ատակ և լիցի պտղաբեր բարեաց: Ապաքն եթէ երկիր և որ ի հմին բոյսը և տունեմք ի գոյաւորել և ի մատուցանէ զբերս բարիս ըստ իսրաքանչիր յատկութեամբ օրինին ի Տեառնէ և ի մարդկանց, որչակ և ատակ մարդկի բանաւոր վերացնալը ի հմանութիւն և ի պատկեր հանուրց գոյացուցչին, որոց բարեզգեաց վարուց ընթացք, և քաջապահ գործնական առաքինութեանցն թերք և արգասիք վերաբերեալք առ բարձիալն Աստուած անշուշն ինյին ճառը օրինութեան և շնորհակալութեան արքաշապետին զնոցուն:

Հաս որոյ ամա դոր ամենաարդեապաշն հարազան որիդք լուսածին ծնողին ձերոյ Սրբ Մայր Աթոռոյ զօնինապազ տրմիք և նգմիք ուրախ առնել զաս առաքին գործովք ձերդ շերմենանութեամբ լցուցանելով զենդին բարեզարդութեամբ և պայծա-

ութեամբ մեծի Տաճարի Աստումոց: Որպէս ամս յայտնի ճամուցա մեզ գրութեամբ Հոգեւոր Կոնսիստորի տեղույթ, որ առ սրբազն Սինօքն ամենա շերմենան Հոգով նոյիրատուութիւն ձեր յանուն Սրբ Աթոռոյ և վասն Սրբոց եկեղեցեացն, որ շորջ կամ զնեօք, և բարեշան աշխատակրութիւն ձեր ի նոյն սակա վասն եկեղեցական շապկացն ասեմք և աշխանակացն: Վասն որոյ և մեր տեսնապ գրաբի պուտու արդիւնաոր առաքինի վաստակոց ձերոց օրինեցաք զնեալ յարելան օրինութեամբ, և մատուցան առ Աստուածային սրբազն խորանն զեմանի գատինն ամենա զշերմենանութեան նուերս ձեր, մատչիմք ի մադրան հայցուածոց առ մարդակ Սուրբ Հոգին Աստուած ընկալոն զնուերս տրոց ձերոց ի համեն բարերա Սրբ Աստուածութեան իրոյ, և օրինել զնեալ զամանեսին զպուղասոտ բանաւոր զուունկան եկեղեցւոյն Քրիստոսի, և պանել հաստարման ի խորս զիստութեան բրիտութեական հաւատոյս, և փիսարինն ի ձեզ զշնորհն և զիմանի քաղցր բարեկարութեամբ իրոյ. յաջողի ձեզ զգործս ձեր ի բարին և ի վայելուն, և հանգուցանել զնեալ զամանեսին հանդերձ որդուով և ընտանեօք ձերովք ի խաղաղաւուն կեան և ի բարօրութիւնս աւոց կենաց ձերոց. և լուսաւորել զնոգիս համացն ննջեցելոցն ձերոց լուսով տեսութեան սուրբ աստուածութեան իրոյ, ամէն:

Ողջ կերուր, և շնորհք Տեառն մերը Յիսուսի եղիցի ընդ զնեալ և ընդ նույոյ ձերում, ամէն:

Վասն ձեր միջու շերմենան աղօթարա Կաթուութիւնի ամենայն Հայոց:

1881 մարտի 28,  
ի Սուրբ Էջմիածնի:

ԵՓՐԵՄ Ս.

## № 307

## ՔԱՐՈՉԳԻՒՐ

**Թերթերը՝ 75:—Գրակները՝** ամենավասարաշափ են:—Մեծությունը՝  $21 \times 14,5 \times 1,5$  մմ: Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:—Կազմը՝ թղթակազմ ստվարաթուղթ:—Պահպանակներ՝ սկզբից կան երկու թերթ հասարակ թուղթ:—Վիճակը՝ թղթերը դեղնած են, իսկ կազմը մի քի քայլարկած:—Գրությունը՝ միսւսուն:—Տողերը՝ 28:—Գծումները՝ թուղթն ինընին գծավոր է:—Գրիը՝ շեղագիր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիը՝ Ռ. Դ. Կիրակոսյան:—Ժամանակը՝ 1 օգոստոսի 1918 թ.:—Վայրը՝ անհայտ:—Մանուքություն՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիպելից (Հիմ Վենարանի դիվանատան սենյակից):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա և 1բ Եկերում տրված է գրքի առաջարանը, ապա տրված էն տասը բարողներ, որոնց ցուցակը նեղնակը տալիս է 78ը և 74ա էջերում:

## ՀՆԵՍԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Բաղտատութիւն հնորդ և նորոց.  
ի շարատրութեան Ռ. Դ. Կիրակոսյան,

Մաս Բ.

1918 օգոստոս 1-ին սկսեալ:

## № 308

## ՑՈՒՑԵՐ

**Թերթեր՝** 687+9=696 (494-րդ թերթն ունի 9 հավլվածական թերթ, համարակաված 494ր—494ժ):—**Պրակեներ՝** գյուղաբն չտնեն, ձևագիրը գրված է առանձին թերթերի վրա, որութ տեղ-տեղ կացված են սուխնձուկ:—**Մեծովյան՝**  $29,2 \times 20,5 \times 9,5$  սմ:—**Նրոքը՝** դեմնած համարակ բարակ բուղթ:—**Կազմ՝** չտնեն:—**Պահպանակներ՝** սկզբում և վերջում մեկական ստվարացույց կա:—**Վիճակը՝** անբավար, վերշից թերթեր են պակասում, որովհետև նախադասությունը կիսատ է մնացել:—**Գրույտներ՝** միապնի:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** անհամաչափ, տարրերպվում են 28—33-ի միջև:—**Գծումները՝** տեղ-տեղ մասիսով և տեղ-տեղ էլ առանց գծում:—**Գիրը՝** շեղագիր:—**Զարդարություն՝** չտնեն:—**Գրիշն և պատվիրատում՝** բնենիկ Եղիազարյան:—**Ժամանակը՝** 1942 թ:—**Վայրը՝** Երևան:—**Մանրություն՝** 1959 թ. ձևագիրը գրված է նախկին վարդապետ Բնենիկ Եղիազարյանի կողմից: Մատղանը համարակաված է նույն ինքն գրչի կողմից պատվեն:

Էջ 1—553 գրված է թղթի մի երեսին,  
Էջ 554—803 գրված է թղթի երկու երեսին:

Նպատակահարմաք համարվեց 554-րդ էջից սկզբայի համարակալումը շարունակել ըստ թերթի, և ոչ թե ըստ էջի, որով գրչի 554—803 էջերի համարակալումը փոխարինվեց 554—687 համարներով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Եղիազարյան նախկին միարան բնենիկ վարդապետ Եղիազարյանն իր սույն հուշերը գրել է ընդգրկելով իր ծննդյանց՝ 1867 թվականից մինչև 1912 թ., որից մետք կիսատ է թողել այն: Միգրում նա գրել է իր գերդաստանի, իր ծննդավայրի (Ասպարանի Ղազանաֆար գյուղ), տեղվոյն կենցաղային ստվորությունների և վարք ու քարք մասին, պարզ և հստակ լեզվով: Մանրամասն գրում է զյուղական դպրոցի, Եղիազարյանի ճեմարանի և Օդեսայի համալսարանի իր ուսման տարիների մասին: Մանրամասն և շատ հետաքրքիր տեղենկություններ կան Եղիազարյանի վանքի ներքին կանքի և անցուքարձերի մասին, որոնք ընդգրկում են Գեղրդ Դ կաթողիկոսից մինչև Գեղրդ Ե կաթողիկոսի ընտրության ժամանակաշրջանը: Հետաքրքիր կերպով պատմում է իր սարկավագության ժամանակ վանքից արտաքաման և մետաքայում վարդապետն ժամանակ Օրենքորդ արտրվելու, ինչպես նաև Երևանի և ապա Շուշու թեմական դպրանցների իր տեսական տարիների մասին: Գեղրդ Դ, Մակար, Մատթեոս Բ և Գեղրդ Ե կաթողիկոսներից բացի տաղիս է Մկրտիչ Խորիման կաթողիկոսի ընութագիրը, մանրամասն տեղենկություններով և հետաքրքիր դրվագներով: Ականատեսներից լսելով նկարագրում է Խորիմանի 1895 թ. տեսակցությունը Ռուսաստանի կապեր են: Պատմում է, թե գյուղում ինչպես իր վրա մահափորձ են կատարել: Բազմաթիվ էջերում մետաքրքիր տեղենկություններ է տա-

լիս Կոմիտաս վարդապետի և իր նկարագրած ժամանակաշրջանի և Եղիազարյանի զամանական միարանների և թեմակալ առաջնորդների կյանքի և վարքի մասին:

Բնենիկ Եղիազարյանի այս հուշերն ընդարձակ և մետաքրքիր նյութեր են տալիս նկարագրված այդ ժամանակաշրջանի մասնավորապես և Եղիազարյանի վանքի, Գեղրգեան ճեմարանի և հոգևորականության, և ընդհանրապես նայ ժողովրդի պատմության մասին:

Գրիշն իր ամրող պատմությունը գրել է կարծեք մեկ շնչով, շարունակական կերպով: Տեղ-տեղ միաց ընդածելով տվիլ է մի քանի վերեագրեր և ենթավերագրեր, որոնք նետկալիքերն են:—

(Գրիշն ակզրում գրել է նոր ուղղագրությամբ, ապա փոխել է հնին, տեղ-տեղ թղթներով նորը: Պահվում է գրչի ուղղագրությունը):

- Թ. 1.—Նախարան.
- Թ. 6.—Ցուշեր—իմ մանկությունը.
- Թ. 87.—II իմ պատասենկությունը.
- Թ. 143.—Գեղրգեան ճեմարանը.
- Թ. 167.—Գեղվորդ Դ. Մեծագործ կաթողիկոսի մահը.

Թ. 173.—Մեր ճեմարանը.

Թթ. 564ա/564թ.—Ս. Եղիազարյանի կալվածների գրալման օրերը և նայ ժողովրդի համատարած բողոքավոր շարժումը ցարական իշխանության դեմ (1903 թ.):

- Թ. 588թ.—Խարկովում.
- Թ. 591թ.—Դեպի Օրենքորդ.
- Թ. 593թ.—Օրենքորդում.
- Թ. 618ա.—Դարձ դեպի նպաններ.
- Թ. 639թ.—Վերադարձ Եղիազարյանի.
- Թ. 640թ.—Կաթողիկոսական նոր ընտրութեան պատրաստութիւն.
- Թ. 644թ.—Իգմիրյեան Մատթեոս Բ-ի կաթողիկոսութիւնը.

Թ. 670ա.—Գեղրդ արքեպիսկոպոս Սուրենեանը՝ Տեղակալ:

## № 309

ԼՐԴ ԲԱՅՑՐԾՆԻ «ԿԱՅԷՆ»  
ՈՂԲԵՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

**Թերթեր՝** 78:—**Պրակեներ՝** 5, անկանոն, Ա պրակը 16, Բ' 14, Գ' 16, Դ' 12 և Ե' 18 թերթ:—**Մեծովյան՝**  $22 \times 14,6 \times 0,9$  սմ:—**Նրոքը՝** դիմացկուն լավ բուղթ:—**Կազմը՝** սպիրականից հնաս բուղթ:—**Պահպանակներ՝** սկզբում և վերջում մեկական թերթ բուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրույտներ՝** միապնի:—**Դատարկ թղթերը՝** 4ա, 4թ, 77ա, 77թ, 78ա և 78թ:—**Տողերը՝** 27:—**Գծումները՝** տողավոր բուղթ:—**Գիրը՝** նոտրդիր:—**Զարդարություն՝** չտնեն:—**Գրիշն և թարգմանիչը՝** Տիրայր վարդապետ Տիր-Հովհաննիսիսան, միարան Մարտ Ալոտ և Եղիազարյանի:—**Ժամանակը՝** 1905 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Մանրություն՝** Վեհապատ Հայրապետի 1960 թ. ամսան Ամերիկա ազգելության առթիվ սույն ձեռագրի

գրիշ Տիրապար սրբությունը որդին՝ Տիգրան Մեծամատության կողմէն առաջարկված է անգլիացի գրող Լորդ Բայրոնի (1788—1824 թ.) «Կայեն» ողբերգության հայերեն գեղագիտական թարգմանությունը կատարված Տիրապար Վարդապետի կողմից 1905 թ.:

## 2. Կայեն.

3. Լ. Բեկըլլս—Բեն-Հոոր:

№ 310

ԱՌԵԴԱԿ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սույն ձեռագիրը համեխանում է անգլիացի գրող Լորդ Բայրոնի (1788—1824 թ.) «Կայեն» ողբերգության հայերեն գեղագիտական թարգմանությունը կատարված Տիրապար Վարդապետի կողմից 1905 թ.:

Թ. 2ա.—Նախարան (Լորդ Բայրոնի).

Թ. 5ա.—«Կայեն» Առաջին արարուած.

Թ. 27ա.—Երկրորդ արարուած.

Թ. 52ա.—Երրորդ արարուած.

Թ. 74ա.—Մանօթութիւններ:

(Ողբերգությունն ընդգրկում է ընդամենը 3212 տող):

## ՀԻՉԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Լորդ Բայրոն—Կայեն.

Սիստերիա երեք արարուածով.

«Եւ օճճ էր խորամանկ (իմաստնագոյն) քան զամենայն կենդանիս, որ սոնչ Տէր Աստուած»:

Ծննդ. Գ. 1.

Թարգմ(անեց) բնագր(ից)

Տ(իրապ) Վ.(արդապետ)

1905

Lord Byron  
Cain.Թ. 1թ.—«Կայեն» միատերիա  
ձօնում է

Բարոնէն Սըր Վալտեր Ակոստին  
իր շնորհապարտ և հաւատարիմ ծառայ  
Հեղինակը:

## ՀԻՉԱՏԱԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Գրված է Տիրապար Վարդապետի ձեռքով կոնակի կազմի վրա, ներսի կողմից)

Ֆրիկի Դիանան

Խորատական, այլարամական տաղմար  
Ձեռագրերի համեմատութեամբ

բնագիրը

բննական ուսումնակիրութեամբ

Բրատարակեց

Տ(իրապ) Վ.(արդապետ)

(Գրված է Տիրապար Վարդապետի ձեռքով կոնակի կազմի վրա, դրսի կողմից)

Տպուած

1. Գաղափարական քահանայ (սպառած).

2. Մի մանկան նոգու պատմութիւն.

3. Հերոսարաւու.

4. Բանակն ինչպես ազատեցի.

5. Գրագ.

6. Նոր կուռք.

Անտիա

1. Ս. Պիտոռոսի յարաքերութիւնները Հայ ազգի նետ.

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 29,7×28,1 սմ.:—  
Նյութը՝ ցեղակեր դեղնած հաստ բույս:—Կազմ՝  
չունենալու դեպքում՝ առավագ չ ապահով չըա-  
նակի մեջ: Կոնակում կացված է հաստ բույս:—  
Վիճակը՝ անբավարար:—Գրությունը՝ միապուն:—  
Տողերը՝ 16:—Գծումներ՝ չունի:—Գիրը՝ նոտրդիր:—  
Զարդագրություն՝ Կոնակն ունի երկու սիրուս գու-  
նավոր մեծ ծաղկագրեր: «Կաթողիկոս» բայի վրա  
նկարված է գունավոր խաչազարդ մի գմբեթ: Կոն-  
ակի վերևի կենտրոնում կա Եփրեմ կաթողիկոսի  
կարմիր կնիքը, 3,5 սմ. տրամագծով, որի կենտրո-  
նում նկարված էն Քրիստոս և Աստվածամայրը,  
իսկ երկնքից իշնում է և Հոգին աղավանու կերպա-  
րանքով: Ծրածակում գրված է հնույազը. «Ըս-  
թութ ՈՒՄԾԹ» (1810 թ. և. Մ.): Կնիքը, որպես  
արեգակ, լուսի ուկեցույն և այլ գույնի ճառագյա-  
ցեր է արձակում: Կոնակի ամենավերևում եռան-  
կյունի մեջ նկարված մի փոքր աչք կա, որ նոյն-  
պես ճառագյացեր է արձակում:—Գրիշը՝ ան-  
հայտ:—Պատվիրատուն՝ Եփրեմ Զորագեղի կաթո-  
ղիկոս (1810—1831 թ.):—Մաղկողը՝ անհայտ:—  
Ժամանակը՝ 1 հունիսի 1880 թ.:—Վայրը՝ Ս. Էջ-  
միածնի վանք:—Մանօթություն՝ Ձեռագիր կոնակն  
առացված է որպես նվեր Վերջին տարիներու ներքին  
թիմերից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ցիստուի Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ կաթողի-  
կոս (Բնտապայում անունը խումացած լինելուն մեկը  
վրայից հասարակ թանաքով գրել է. «Եփրեմ կաթո-  
ղիկոս»—և. Մ.): ամենայն Հայոց և Մայրագյուն  
Պատրիարք առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի,  
նաև Մայր Աթոռոյու Սրբոյ կաթոլիկ Էջմիածնի:

Հայապահտական օրինութեամբ մերով տամք զայս  
վկայական գրեղոցն ինքնայօժար կամօք ի ճորտու-  
թիւն Սրբոյ Կաթոլիկէ Էջմիածնի (Բնտապայում  
մեկը գրել է հասարակ թանաքով Բնուկալը. «Կա-  
թոլիկէ Էջմիածնին»—և. Մ.): Բայազդի օրինակ  
Պրե. Թամրազայ և որդուց իրոց Պապային և Սու-  
փանին, որով և յայտնեմք ամեննեցում որոց միան-  
գամ ունիցին ինչ բան ի մասին ճորտութիւն ացցա-  
զի սոքա յերեսաւոր ամաց հետ գոյու ազատեազ  
ի ճորտութեան ...աց որպէս և ցուցան վկայական  
նոցին պատառութեան, զոր սուցեալ ունին յիրեանց  
պարունէն, մտեալ են ի ճորտութիւն Սրբոյ Աթոռոյ,  
և մինչև ցայծ ըստ սովորութեանն լիրաքանչիր  
ամի մին չարէք մոմ նուիրեալ են և նուիրեան  
անխափան սմին Աթոռոյ, բայց ըստ պատահման  
չունենալ վկայագիր ի Հայրապետէ Աթոռոյ ի մա-  
սին ճորտութեան իրեանց, խնդրեցին և տուար

նոցա զոյն վկայական դրոշմամբ նշանի Հայրապետական մեր կերպ, և ձեռագրութեամբ, զի ոչ ոք ի տևամեջն զայն՝ ունիցի իրաւուն պահանջողութիւն ինչ առնելի ի սոցունց ի մասին ճորտութեան, զի ևն սեպանական ճորտը Սրբոյ Աթոռոյ՝ գրեալք զրդուց յորդիս որպէս ի ներեանք նոյնպէս և ժառանգք նոցին: Գրեցա յամի Տևառն 1830, յամսեանն ի յունիսի 1 ի Սուրբ Կաթողիկէն էջմիածին:

Համար 99.

Կայտուիկոս ամենայն Հայոց  
ԵֆրէՄ

## № 311

## ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

**Թերթերը՝ 133:**—**Պրակեները՝** ձեռագիրը գործարանային կազմված մատյան է, որով կարելի չեղալ պրակեները հաշվել:—**Մեծությունը՝**  $31,7 \times 21,5 \times 1,7$  սմ:—**Նյութը՝** դիմացկուն դեղնած թուղթ:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:—**Պահպանակեները՝** սկզբում և վերջում կա մեկական կապուտ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** շատ լավ:—**Գրությունը՝** միասուն:—**Դատարկ թոյերը՝** 1ա, 1թ, 2թ, 3թ, 4թ, 131թ, 132ա—133թ:—**Տողերը՝** 14:—**Գծումները՝** չունի:—**Գիրը՝** նոտրզիր, իսկ նոտաները գրված են հայկական նոր ձայնանշիքով:—**Զարդագրությունը՝** գրեթե չունի: Միայն երկու տեղ թթ. 10թ և 130ա վերնագրերը («Հարցը Յարութեան» և «Ցանկ») գրված են մեացաներից տարբեր, կարմիր և սև գույներով, շատ հասարակ զարդագրությամբ:—**Գիշը՝** Հարություն Աստվածառուրան, պանտրմացի (1878—1909 թ.):—**Ժամանակը՝** 18 նունիսից մինչև 31 օգոստոսի 1891 թ.:—**Վայրը՝** շատ հավանաբար Նիկոսիայում (Կիպրոս):—**Մանությունը՝** սույն ձեռագիրը Լունդոնից 1969 թ. նվազ է ուղարկված Մայր Աթոռու ձեռագրատան նեղնակի որդի Արքենակ Ասասուրյանի կողմից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 1ա—129թ.—Մարցը Յարցը Յարութեան:  
Թ.թ. 130ա—131ա.—Ցանկ:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 129թ.—Մոյն Յարութեան հարցերը սկսայ ընդորինակել 1891 Յունիսի 18-ին և լրացայ օգոստոս 31-ին 2թ. օրը:

Յարութիւն Աստվածառութեան

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.—Հակիրճ կենսագրական ծանօթութիւններ նորս Յարութիւն Աստվածառութեան (Աստուրեան) գրի առնուած իր որդուն Արքենակ Ասասուրեանի կողմից:

Հայրս, Յթթ. Ած.աստուրեան ծնած է ի Պանտրմաց (Թուրքիա) 1873 Մարտ 17-ին:

Իր փորբիկ հասակին կորսնցնելով իր ծնողը, զինք դրկած են Երուսաղէմ, Ժառանգաւորաց վարձարան:

Հոն դաստիարակունցաւ Խրիմեան Հայրիկի, Սահակ կաթողիկոս Խապահանի և Յթթ. պատրիարքի կողմէ:

Երուսաղէմի իր դաստիարակունց եղած են Բնաւեալները:—

Պետրոս Սարանեան (Կաթողիկոս Կիլիկիոյ)

Մեսրոպ Արքեպոս. Նշանեան (Պատրիարք Երուսաղէմայ)

Գեորգ Վոդ. Պուրեան (Առաջնորդ Տրավիզոնի, Ասբանեալ)

Վարդան Արքեպոս. Գալիֆորնիոյ (Վերջերս մանացեալ)

և որդիներ (10 նոգի ամենը):

Ինք կրօնար ըլլալ չի փափաքելուն, զինքը Կիպրոս որկած են իր Տնօրէն-ուսուցիչ Նիկոսիայի ազգային Վարդանանց վարժարանի և նոյնպէս իր դպրագլու Ս. Ած.ածին և կեղեցու:

Հայու 14 տարիներ պաշտօնաւարեց Նիկոսիայ և հայրան եմ ըսկու որ հայր եղած է առաջին ուսուցիչ հայերէն լեզուն ներմուծելու և ուսուցանելու ի Կիպրոս—իրմէ առաջ դպրոցի լեզուն թքերէն էր հայերէն գրերով:

Այս 14 տարուայ ժամանակամիջոցին հասցուցած է շատ ընտիր, հայրենասէր, ազգասէր և ազնի աշակերտներ, որոնք մինչև ցամաք պատի կը թերեն Կիպրահայութեան:

Հօրս ազնի, ուղամիտ և ամբախի բնաւորութեամբը շատ սիրուած ու յարգուած էր կիպրահայութեանց կողմից:

Կիպրոս եկած է 19 տարեկանին (1891-ին) և 20 տարեկանին ամուսնացած է մօրս Նազը Կիպրէզեանի հետ և ունեցած է 3 մանչ զաւակ, Հայկ, Արմենակ և Արամ:

Ինք եղած է նոյնպէս Հնջակեան գործիչ (Աստենադպիչ):

1905-ին մեկնած է Եղիպատու և նոն պաշտօնաւարած Գամիրէի Գալուստեան վարժարանի մէջ Պր. Վահան Գիրքնեանի օրով, մինչև 1907:

Ինք եղած է նոյնպէս Հնջակեան Բարեգործական Ընդհանուր Միութեան առաջին քարտուղար, երբ այս Միութիւնը կը հաստատուեր 1908-ին (տես իր ձեռագիրը Բարեգործականի (թ. 3ա) Ուկեմատեանի առաջին էջերը, որոն տակ ստորագրած են Պողոս Բաշա Նուպար և որիշներ):

1907-ին կանչուած է Հնդկաստան և պաշտօնաւարած է իր Տնօրէն Կալկաթայի Հայ Մարդասիրական Ծննդամբ իր գրափառազէտ—բայց Հնդկաստանի շատ տաք կիմային չի տոկալով հրամարած է 1909-ին (14 ամիսն) և վերադառցած է Կիպրոս իր ընտանիքին քով:

Կիրեղ պատրիարք Երուսաղէմայ եղած է մինչ իր Հնդկաստանի աշակերտներէն:

Նոյն տարին մեկնած է Երրուպայ, բայց Աթէնքի մէջ կոյր աղիքի բռբորումէ բռնուելով (բերիթօնիթիւն) գործողութենէ վեր միայն 4 օր ապրելով իր մասնացանց կմբած է, 28 նույնումքեր 1909-ին,  $36\frac{1}{2}$  տարեկան ծաղկի հասակին մէջ, մեռու իր ընտանիքը ու զաւակներէն:

Հօրս ձայնը ըլլալով շատ անուշ, Երուսաղեմայ մէջ սորված է հայկական ձայնանիշերը (նօթամերը) և ամա պա 8 գրեթեն են, գրի առնուած իր իսկ ձեռքով, որ իր զաւակները Հայկ ու Արմենակ (Արամ մռած է Նի Նօրք 1963-ին) կը նուիրեն Սուրբ Էջմիածնայ, վաստի ըլլալով որ պա ինչ Երուսաղեմական եղանակները որոնք կերգուէին Խրիմեան Հայրիկի, Սահակ Կաթողիկոսի և Յոթ Պատրիարքի օրով և Բինայ բոլորովին կորուած, օգտակար պիտի Բանդիսանան մեր Լուսաւորչական Սուրբ եկեղեց:

Մնամ յարգանօր,  
Արմենակ Յոթ Ասատուրեան

Լոնսոն, 28 Սեպտեմբեր 1969,

39 Gladstone Park Gardens,  
Cricklewood, London, M. W. 2,  
ENGLAND.

(1965-էն ի վեր փոխադրուած ենք ընտանեօր Կիպրոսէն ի Լոնսոն):

Յ. Գ. (տես էջ 8):

Թ. 4ա.—Ի գրեանց

Յոթ Ած.աստուրեան.

Երուսաղեմ, 1891.

Նույն Հայաստանի

իր որդույն

Արմենակ Ասատուրեանի կողմանէ.

Նիկուսեան, Կիպրոս, 1891:

Յ. Գ. Այս պատեմ առիթով կուգամ աւել(1) ցնելու որ ստորագրեալս 1988-ին կրցաւ կուակ մը լաշողունակ ի Ապաստ Հայաստանի առամնարուժարանին Տօք. Գա(բ) իիէլ Թորոս Ռէյսեանի (Ալենցի, Կասմա գիտէց) կողմէտ, և իր մաթէն վերջ, իրը կուականար, Հայաստանի կառավարութեան առաջարկին, Լոնսոննէ Հայաստան ուղարկուեցան 22 մեծ սեսուկ առամնարուժական շատ ընտիր գործիքներ և 4 „Առլ. ներ իինց առողմերով, իմ կողմէ ընտրուած, որոնք Երևան հասան 1989-ի մկիսաները և տրամադրուեցան զանազան հիմանամոցներու:

Ուրախ եմ որ պա փոքրիկ ծառայութիւնով կը ըստ մի քիչ օգտակար Բանդիսանապ իմ հայունիքին և Բայրենակիցներու:

Մնամ յարգանօր  
Արմենակ Յոթ Ասատուրեան

Լոնսոն

28 Սեպտեմբեր 1969

ԱԱս.

№ 812

ՏԱՂԵՐ ԵՒ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Թերեկը՝ 50:—Պակները՝ քայրաված, անկանոն:—Մեծությունը՝ 28×20,5×0,2 սմ. (թթ. 1—80) և 30×21×0,2 սմ. (թթ. 81—50):—Նույթը՝ շատ քարակ դեմած թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չկան:—Վիճակը՝ անբավարար:—Գրությունը՝ միայնուն:—Դատարկ թղթերը՝ 22ր—24ր:—Ցողերը՝ անկանոն 10—24:—Գծումներ՝ չունի, բացի առաջին երկու թղթերով, որոնք գծավոր են:—Գիրը՝ նո-

տըրգիր, իսկ նուանեաը գրված են հայկական նոր ձայնանիշերով:—Գրիչը՝ Հարություն Աստվածատուրյան:—Ժամանակը՝ 18—20-րդ դարեր:—Վայրը՝ անհայտ:—Մասնություն՝ սույն ձևագիրը Լոնդոնից նվեր է ուղարկված Մայր Աթոռի ձեռագրատան մէջինակի որդի Արմենակ Ասատուրյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1թ.—ՆԵՐԱՎԵՆՈՒ:

Թ. 2ա.—Անբաժանելի զկնի լիշեսցուքին եղանակ (Սապա) Թաշճեան:

Թ. 4ա.—Կանոն Մեծի սինգչարաքին. Օրմնույթ Գձ. ծանր:

Թ. 7թ.—Կանոն Մեծի ուրբաթուն. Օրմնութիւն Բձ. ծանր:

Թ. 10ա.—Կանոն Պէսուէկոստի Սուաշին աւոր. Օրմնութիւն Դձ. ծանր:

Թ. 11ա.—Հարց երկրորդ աւոր Աստուածաբայտնութեան. Գձ. Ծ.:

Թ. 12ա.—Կանոն Մեծի երկուշարաքին. Օրն. Բձ. Ծ.:

Թ. 15ա.—Կանոն Մեծի երեքշարաքին. Հարց. Բձ. Ծ.:

Թ. 16ա.—Մանկունք Մեծի երեքշարաքին. Գձ. ծանր:

Թ. 18թ.—Հարց Մեծի չորեքշարաքին. Գձ. ծանր:

Թ. 17ա.—Մանկունք Գձ. ծանր:

Թ. 17թ.—Կանոն Ղազարու Յարութեան. Հ. Բձ. Ծ.:

Թ. 19ա.—Հարց ապաշխարութ. Ակ. Առաջին. ծանր:

Թ. 20ա.—Հարց. Բ. ապաշխարութ. ծանր:

Թ. 21ա.—Հարց Գ. Ակ. ծանր:

Թ. 21թ.—Հարց Դ.:

Թ. 25ա.—Օրմնույթ. Վարագայ Խաչի:

Թ. 27ա.—Հարց Գիւտ Խաչի:

Թ. 31ա.—Կանոն Շողակաթին:

Թ. 32թ.—Հարց. Խաչի Ա. աւոր. ԳՁ. Ծ.:

Թ. 34ա.—Օրմնույթ. Բ. աւոր Վարդավառի:

Թ. 35թ.—Ակ. Բ. աւոր. Վարդավառի. ԽԿ. առելի:

Թ. 36թ.—Կանոն Վարդավառի Գ. աւոր. Օրն. Գձ. Ծ.:

Թ. 37թ.—Տէր յերկնից. Ծ. Բձ. Ապաշխարութեան:

Թ. 38ա.—Որ դասուց հարցին վերջին տումը:

Թ. 39ա.—Տէր յերկնից ապաշխարութ. Բձ. Ծանր. մասնաւոր եղանակ:

Թ. 39թ.—Կանոն Բրեշտակապեսուաց:

Թ. 41թ.—Հարց Արին. Հրեշտակապեսուաց:

Թ. 42թ.—Կանոն Յակովայ Մծրնայ Հայրապետին. Օրն. Գձ. Ծ.:

Թ. 45թ.—Համբարձի Սրբոց Ղևոնդիանց:

Թ. 48թ.—Հասուածք Խաչի Անապակամին:

Թ. 49ա.—Շարական գիւտի Սրբոց Խաչին:

ՀԻՉՍԱՍԱԿԱՐԱՆ

Թ. 7ա.—Յաջորդ տուներն յաջորդ երեսի՝ յաջորդ երես գրուած են սիսակմար. զայիք երես

«Արծաթիրութեամբ»ի Յ տներն գրուած են:

Թ. 43ա.—Այս գրուածն սխալ ըլլալում՝ ուղիղ մէկ տուն յաջորդ երեսը պիտի տևանեմք որ գրեթէ միւս տուներն ալ ասած ոճով ճիշդ կնրգուին:

#### ՀԻԾՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Թ. 25ա.—(Կըսուի):

Թ. 27ա.—Կըսուի:

(Բարակ թղթա ծրարի վրա գրված է)  
Նույր Հայաստանի, Յրթ. Ա. Ասուրեանի  
որդուն Արմենակ Ասատորեանի կողմանէ:  
Նիկոսիայ, Կիպրոս, 1969:

№ 313

ԳԻՐՔ ԽՐԱՏՈՑ

Թերթերը՝ 492:—Պրակները՝ 42, յորաքանչյուրը  
12-ական թերթից:—Մեծությունը՝ 30×21,5×6,2 սմ.:  
—Նյութը՝ դեղնած դիմացելուն հաստ թուլյօ:—Կազ-  
մը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ուկեզույն զար-  
դեր են տպված:—Պահպանակները՝ սկզբում հաստ  
սպիտակ մնկ թուլյօ:—Վիճակը՝ շատ լավ:—Գրու-  
թյունը՝ երկարուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—3թ,  
487թ—492թ:—Տողերը՝ 50:—Գծումներ՝ չունի:—Գի-  
րը՝ մանր նոտրդիր:—Զարդարություն՝ ձևագրի  
մանրանկարչությունը միշին որակի է: Առաջին է-

շում (4ա) կա մի հաստ լուսանցագարդ, մի հաստ  
թոշնագիր և մնկ գլխազարդ, որի տակ գրված է  
«Էկլէսիատիկոս»: Մրանցից բացի ձեռագրում կան  
ընդամենը 49 հատ թոշնագրեր, որոնցից երկուը  
միայն թոշնագիր-մարդագիր է (թթ. 183թ և 407թ):  
Գրիշը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղ-  
կողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 16—17-րդ դարեր:—  
Վայրը՝ անհայտ:—Մանոթություն՝ Մայր Աթոռի Զե-  
նուագրատունը սովուն ձեռագիրն ստացել է վերջին  
նիրքին թեմերից:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թթ. 4ա—472թ.—Էկլէսիատիկոս (Խրատուների  
գիրք):

Թթ. 473թ—487թ.—Ցանգ մատունական (ազրե-  
նական ընդհանուր ցուցակ բոլոր գլուխների և են-  
թարաժինների):

Ընդհանուր ձեռագիրը բաղկացած է 51 գլուխնե-  
րից:

#### ՀԻԾՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. Յթ.— Կոնգ. Յ. Ա. Միլյուտինա  
տել. 90—38—11.

(Նույնը գրված է նաև պահպանակի առաջին երե-  
սի վրա):

(Ծարունակելի)